ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 23-25-ը

Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը

Հովհաննես Ազիզյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն (Ալմաթի), 2017թ. հոկտեմբերի 23-25-ը

4. Հրավիրող կողմը

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Ալմաթիում կայացած Եվրասիա Մրցունակության ծրագրի շրջանակներում կազմակերպված *ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2017-ին*:

6. Քննարկված թեմաները

- Հայաստանի Հանրապետությունում կատարված մրցունակության բարեփոխումների փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցների *(«Անդրազգային ընկերությունների ներգրավում և Հայաստանի ՓՄՁ-ների միջև կապերի ստեղծում շինարարական նյութերի ոլորտում» և «Հայաստանի ՓՄՁ-ները համաշխարհային արժեքի շղթային կապակցելը. անդրադարձ ագրոբիզնեսին»)* արդյունքում տրված առաջարկությունների հիման վրա իրականացված աշխատանքների և բարեփոխումների մոնիթորինգի արդյունքների քննարկում:
- ՏՀԶԿ ՕՈՒՆ կարգավորումների սահմանափակման ինդեքսում Հայաստանը ներառելու ուղղությամբ աշխատանքների իրականացման քայլեր:

- ՏՀԶԿ հետ ՓՄԶ վիճակագրության ուղղված ծրագրի իրականացմանն ուղղված քայլեր:
- *ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2017-ի* ներկայացվել են Հայաստանի և Տաջիկստանի կատարված մրցունակության բարեփոխումների փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցների արդյունքում տրված առաջարկությունների հիման վրա երկրների մոնիթորինգի արդյունքները:
- Ուզբեկստանի փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցների ներկայացում:

7. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը

ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2017-ի ընթացքում.

- Տեղի է ունեցել հանդիպում ՏՀԶԿ Քարտուղարության հետ: Քննարկվել են ծրագրի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները, հետագա համագործակցության հնարավորությունները:
- Տեղի է ունեցել հանդիպում ՏՀԶԿ Եվրասիա մրցունակության ծրագրի ղեկավար Ուիլիամ Թոմսոնի հետ: Քննարկվել են նախորդ երեք տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ներկայիս արդյունքները և հետագա քայլերը:
- Տեղի է ունեցել հանդիպում Մոնղոլիայի արտաքին գործերի նախարարության պետքարտուղար պարոն Դամդինսուրեն Դավաասուրենի գլխավորած պատվիրակության հետ: Քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավոր ուղիները: Հանդիպման ընթացքում ՀՀ ՏԶՆ նախարարի տեղակալի կողմից ներկայացվել է Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության դրական հետևանքները և ԵԱՏՄ մեծ շուկայի առկայությունը:
- Տեղի է ունեցել հանդիպում Ուզբեկստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ պարոն Մուբին Միրզաևի գլխավորած պատվիրակության հետ: Հաշվի առնելով, որ առաջիկայում նախատեսվում է երկու երկրների վարչապետների հանդիպումը, քննարկվել են երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները ակտիվացնելու և խորացնելու հնարավորությունները, մասնավորապես տնտեսության կոնկրետ ոլորտների թիրախավորման հարցը: Առաջարկվել է դիտարկել առաջին հերթին համագործակցությունը տեքստիլի և դեղագործության ոլորտում, ինչպես նաև

ուզբեկական արտադրության գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման հնարավորությունները: Քննարկվել է նաև Հայաստանի միջոցով Իրանի շուկա դուրս գալու հնարավորությունները: Հանդիպման վերջում կողմերը պատրաստակամություն են հայտնել սկսել աշխատանքներ հայ-ուզբեկական հարցերով միջկառավարական հանձնաժողով ստեղծելու ուղղությամբ:

- Մասնակցություն *ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2017-ի* շրջանակներում կազմակերպված Եվրասիական բիզնես ֆորումի բացման պանելին:
- Առանձին հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք ընկերությունների հետ, ինչպիսիք են օրինակ՝ TAKEDA դեղագործական ընկերությունը, Taurus Beheer BV գյուղատնտեսական խորհրդատվական ընկերությունը, SmartGov խորհրդատվական ընկերությունը, Leica Geosystems շվեյցարական ընկերությունը և այլն:
- ՀՀ ՏԶՆ նախարարի տեղակալ Հ. Ազիզյանը Արևելյան գործընկերության երկրների համար նախատեսված ճաշին հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով համաժողովի մասնակիցներին Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները, մեր երկրի ներդրումային միջավայրը և գործարար հնարավորությունները:
- ՀՀ ՏԶՆ նախարարի տեղակալ Հ. Ազիզյանը ՏՀԶԿ Եվրասիա մրցունակության ծրագրի Ղեկավար կոմիտեի ընթացքում հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով ՏՀԶԿ հետ համագործակցության արդյունքները և հետագա երկու ուղղություններով նոր ծրագրերի նախաձեռնության մասին:
- ՀՀ ՏԶՆ նախարարի տեղակալ Հ. Ազիզյանը և ՀՀ գյուղատնտեսության նարարարի տեղակալ Ա. Հարությունյանը ելույթներով հանդես են եկել ՏՀԶԿ Եվրասիա մրցունակության ծրագրի շրջանակում Հայաստանի մոնիթորինգի արդյունքների ներկայացման ընթացքում, ներկայացվել են ՏՀԶԿ և ՀՀ կողմից իրականացված աշխատանքների արդյունքը, գյուղատնտեսության և շինարարական ոլորտներում ՀՀ կողմից իրականացված բարեփոխումները, կատարված աշխատանքները:
- Մասնակցություն Ուզբեկստանի փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցների ներկայացմանը:

- Մասնակցություն Տաջիկստանի մոնիթորինգի արդյունքներին վերաբերող զեկույցի ներկայացմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Այցի ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:
- Ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում կատարված մրցունակության բարեփոխումների փորձագիտական գնահատման (peer review) վերաբերյալ զեկույցների *(«Անդրազգային ընկերությունների ներգրավում և Հայաստանի ՓՄՁ-ների միջև կապերի ստեղծում շինարարական նյութերի ոլորտում» և «Հայաստանի ՓՄՁ-ները համաշխարհային արժեքի շղթային կապակցելը. անդրադարձ ագրոբիզնեսին»)* արդյունքում տրված առաջարկությունների հիման վրա Հայաստանի մոնիթորինգի արդյունքները:
- Պայմանավորվածություն է ձեռքբերվել ՏՀԶԿ հետ աշխատանքները շարունակել, որի նպատակով աշխատանքներ ենք սկսել (ՏՀԶԿ) ՕՈՒՆ կարգավորումների սահմանափակման ինդեքսում Հայաստանը ներառելու ուղղությամբ: Միջազգային ասպարեզում գրեթե միակ վարկանիշն է, որը գնահատում է ՕՈՒՆ կանոնակարգող իրավական դաշտը և կարող է կարևոր ազդակ հանդիսանալ օտարերկրյա ներդրողների համար: Ինդեքսի հաշվարկն իրականացվում է ՏՀԶԿ փորձագետների կողմից պետության ազգային օրենսդրության, կառավարության կողմից ստորագրված ներդրումներին առնչվող միջազգային համաձայնագրերի, կառավարության պարզաբանումների, ինչպես նաև այլ հասանելի նյութերի վերլուծության արդյունքում:
- Պայմանավորվածություն է ձեռքբերվել ՏՀԶԿ հետ շարունակել համագործակցությունը ՓՄՁ վիճակագրության ուղղված ծրագրի շրջանակներում:
- Համագործակցության առանձին պայմանավորվածություններ են ձեռք բերվել ՏՀԶԿ Եվրասիական շաբաթ 2017-ին մասնակցող Ղազախստանի, Մոնղոլիայի բարձրաստիճան պատվիրակությունների ղեկավարների հետ երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու նպատակով:

- Ուզբեկստանի պատվիրակության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել սկսել աշխատանքներ հայ-ուզբեկական հարցերով միջկառավարական հանձնաժողով ստեղծելու ուղղությամբ:

9. Գործուղվողը՝

Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

27.10.2017թ.